ՆՈՐ–ԴԱՐ

№ 177 ՏԱՍՆԵՒԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ Չորեքշաբթի, 27 Նոյեմբերի 1902 Չորեքշաբթի, 27 Նոյեմբերի ՏԱՍՆԵՒԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 177

Տարեկան 10 րուբ., վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը 3 ր. 50 կոպ., ամիսը՝ (Թիֆլիսում) 1 ր., հատով 5 կ.
Բաժանորդ են գրւում Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis, Rédaction «Nor-Dar»

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բառին 2 կ., անկլամների համար կրկնապատիկ

1903

ՆՈՐ–ԴԱՐ

ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Քաղաքական-գրական ամենօրեայ *Թերթը* 1903-ին կըհրատարակուի *Թիֆլիսում* նոյն ծրագրով և ուղղութեամբ ամեն օր, բացի տօներին հետեւող օրերից։

Ստացւում են ՍԵԳՋԱԿԱՆ ՀԵՌԱԴՐԵՐ։

«Նոր-Դար»-ի տարեկան գինն է 10 րուբլի, վեց ամսուանը՝ 6 րուբլի, երեք ամսուանը՝ 3 ր. 50 կ., Թիֆլիսից դուրս ամիսը 1 ր. 50 կ., հատով դուրսը՝ 7 կ., Թիֆլիսում 5 կ.։

Բաժանորդ են գրւում միմիայն խմբագրատանը։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆի բաժանորդները վճարում են տարեկան 40 ֆրանկ։

Յայտարարութիւնները ընդունւում են և՛ օտար լեզուներով բառը 2 կ., անկլիչն երեսումը՝ 4 կոպէկ։

Խմբագրատունը գտնւում է Դաւիդ = վսկայա փողոց, տ. № 5.

Պատով «Նոր-Դար» ի հասցէն՝ Тифлисъ въ Редакцію „НОРЪ-ДАРЪ“ կամ Tiflis Caucase Rédaction du journal «Nor-Dar».

ԾԱՆՕԹ. Թիֆլիսում «Նոր-Դար»-ին այժմ բաժանորդ գրւողը, սեպտեմբեր եռամսեայ բաժանորդ գրւելու օրից. Թիֆլիսից դուրս բաժանորդ գրւողներն սեպտեմբեր եռամսեայ բաժանորդագրւելու օրից՝ բաժանորդագրի նեռ ուղարկելու 7 մարկ.։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

Քրոնիկոն լուրեր։

Մեզ գրում են.—Ս. Էջմիածնից։ Վաղարշապատից։ Բագուից։ Ղուշուց։ Դսնձակից։ Ախալքալաքից։ Ծալկայից։ Բանանցից։

Մեր թեմական հոգևոր դպրանոցների եկամտի ցայսօր անտես առնուած աղբիւրները։

Սնապաշտութիւնը հայ կանանց մէջ։

Հայոց թատրոն։

Նամակ խմբագրութեան։

Մատենախօսական։

Թղթակցութիւններ.— Նամակ Պարսկաստանից, Մարաղա։

Քաղաքական.— Մի նոր ճառ։ Թիւրքիա։ Մակեդոնիա։ Անգլիա։

«Նոր-Դար»-ի հեռագրները։

Խառն լուրեր։

Յայտարարութիւններ։

ՔՐՈՆԻԿՈՆ

—

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը նոյեմբերի 25-ի նիստին որոշեց ռոճիկ նշանակել՝ քաղաքագլխին 6,000 ր. վարչութեան անդամներից իւրաքանչիւրին 3,600 ր., քաղաքագլխի օգնական վարչութեան անդամին 4,100 և քաղաքային քարտուղարին 2000 ր.։

—Երկրագործութեան մինիստրը մի շարք միջոցներ է մշակել կովկասեան հանքային ջրերը կանոնաւորելու համար։ Լրագրների ասելով, ի միջի այլոց, վճռուած է Պեատիգորսկում հիմնել լուսարուժարան և կովկասեան կուրորտներում կառուցել եղեկարական տրամվէյ։

—Դեկտեմբերի 2-ին նշանակուած է կովկասի գիւղատնտեսական ընկերութեան անդամների ընդհանուր ժողովը։ Այդ ժողովում, ի միջի այլոց, քննուելու է իշխ. Վ. Ս. Միքելաձէի մի զեկուցումը ժողովրդական մանր կրեդիտի մասին, որը կազմուած է ընկերութեան խորհրդի յանձնարարութեամբ։

—Վերջերս դարձեալ լսւում են պարբերական հրատարակութիւնների իրաւունքի վաճառման մասին լուրեր։ Այս անգամ էլ հրատարակուող *Թերթերի* առնողներն Բագուից են։ Բագուում նաեւ են ծախում և *Թերթ* են առնում։ Իմանում ենք, որ Բագուում նոր լոյս տեսնող *Թերթերից* մէկի հրատարակիչը արդէն ծախել է իւր *Թերթ* հրատարակութեան իրաւունքը։

—«Կավկազ»-ի մէջ տպուած է. «Նոյեմբերի 23-ին, առաւօտեան ժամը 7-ին կովկասեան երկաթուղիների գլխաւոր արհեստանոցում (Թիֆլիսում) ատրճանակի գնդակով ձախ ոտից վիրաւորուեց ճախարակագործների վարպետ Բլիումբերգ»։

— Ճամախուց «Նով. Օբ.»-ին հաղորդում են, որ նոյեմբերի 19-ին, առաւօտեան ժամը 5-ին, այնտեղ զօրեղ երկրաշարժ է զգացուել։ Բնակիչները վախեցած վեր են թռել անկողիններից։ Ծողովրդին նորից սարսափ է տիրել։

—Թիֆլիսում և Թիֆլիսի նահանգում ժողովրդական ընթերցումներ և ներկայացումներ սկըզող ընկերութեան հայոց ներկայացումների բաժանմունքի տեղեկագրից երեւում է, որ անցած սեպտեմբերին Թիֆլիսում տրուած է հայերէն ժողովրդական 19 ներկայացում, որոնց ներկայ են եղել ընդհանուր առմամբ 4,364 հոգի կամ միջին թուով իւրաքանչիւր ներկայացման ներկայ է եղել 230 հոգի։ Եկամուտ եղել է 384 ր. 20 կ., իսկ ծախք—384 ր. 17 կ.

— Երկուշաբթի, նոյեմբերի 25-ին, Թիֆլիսի դատաստանական պալատում քննւում էր Ռոստիսլաի Բագուի ֆիրմայի երկու կառավարիչների գործը, որոնք մեղադրւում էին հրդեհի առաջը չառնելու համար, որին զոհ էին գնացել մարդիկ։ Դատաստանական պալատում մեղադրեալ Ֆէյգելին և Բուխմանին պաշտպանում էր Թիֆլիսի նախկին նահանգապետ յայտնի երդուեալ հատաւմատար Ք. Ս. Բլկովը։ Մեղադրեալները արդարացած են պալատում, որպէս և նահանգական դատարանում։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

—

Առաջիկայ 1903 թուականի համար «Նոր-Դար»-ի բաժանորդագրութիւնը բացուած լինելով, խնդրում ենք նրանց, որոնք կամենում են 1903-ին ստանալ «Նոր-Դար»-ը, կամ որոնք կամենում են վերանորոգել և՛ առաջիկայ տարուայ համար բաժանորդագրութիւնը, բարեհաճել կարելոյն չափ շուտով ուղարկելու իրենց հասցէն պարզ գրուածք։ Առանձնապէս հրաւիրում ենք հեռաւոր երկրների, ինչպէս Եւրոպայի, Ամերիկայի, Եգիպտոսի և այլ տեղերի, բաժանորդների ուշադրութիւնը այդ հանգամանքի վրայ, եթէ կամենում են, առաջիկայ յունուարի 1-ից անընդհատ ստանալ «Նոր-Դար»-ը։

Բաժանորդագրութիւնը ժամանակին չվերանորոգողին *Թերթը* չի ուղարկուիլ։

ՄԵԶ ԳՐՈՒՄ ԵՆ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻՑ.— Գանձասարի վանքի հանքերն այս օրերս կապալով տուին Տրապիզոնցի Հմայակ Վահանեանցին այն պայմանով, որ եթէ երկաթ կամ պղինձ դուրս գալու լինի, կապալառուն պարտաւոր է հարիւրին եօթը տոկոս վանքին տալու. իսկ եթէ արծաթ կամ ոսկի, այն ժամանակ երեք տոկոսից մէկը պէտք է վանքը ստանայ։

Այսպէս է պահպանւում վանական կալուածների շահերը։

—Տեղապահ Արիստակէս արք.-եպիսկոպոսի աշխատութեամբ Սև Ջրից առու բերելու գործը առաջ է գնում աջողութեամբ. այդ աշխատութիւնը յանձնուած է և արդէն ճարտարապետ է հրաւիրուած։ Առաջիկայ գարնանը Ս. Էջմիածնի հողերը այլ ևս Ջրի պակասութեան պատճառով չեն չորանալ, Առուն Սև Ջրից մինչև Ներսիսի անտառը թէև ասում են պէտք է նստի 16 հազար րուբլի, բայց շատերի կարծիքով հազ իւ թէ 25 հազար րուբլին բաւականանայ։

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ. — Վանքապատկան հրապարակը, որ առաջ հասոյթ էր ըներում տարեկան 700 րուբլի, այժմ այդ հասոյթը իջել ի 150 րուբլու, դրա պատճառն այն է, որ վանական կառավարութիւնը այդ հրապարակը տուել է առանց աճրդի ոմն Միքայէլ Յովակիմեանցին երեք տարի ժամանակով։

—

ԲԱԴՈՒԻՑ. — Այստեղի հասարակութիւնը հետաքրքրութեամբ հետեւում է գործարանատէր պ. Զահզիդանեանի և երդուեալ հաւատարմատար պ. Ենգիբարեանի միջև ծագած վէճին, որի վճիռը յանձնուած է պատուոյ միջնորդ դատարանին։ Պատուոյ միջնորդ դատարանի անդամներ են ընտրուած երկու կողմի համաձայնութեամբ պ. պ. Ֆ. Ա. Բլկով, Ա. Վաչեանց, Ա. Ֆէյգել, Վանովիչ, ինժեներ Ա. Պարոնեանի նախագահութեամբ։ Սպասում ենք այս օրերս պատուոյ դատարանի վճռին։

—

ՀՈՒՀՈՒՑ.—Ինչպէս յայտնի է, մեր թեմի առաջնորդ սրբազան Դաւնակերեանը ս. Էջմիածնից ողջմիտ վերադարձաւ տեղս և սկսեց իւր պաշտօնավարութիւնը դարձեալ իւր երկու թիկնապահներով... Լսւում էր, որ ս. Էջմիածինը նոր քննիչ պիտի ուղարկէր կոնսիստորիայի երկու գրագիրների գործերը քննելու, սակայն լուրը լուր մնաց։ Երիքը երբ պաշտպանութիւն գտնելուց զատ դեռ ևս քաջերւում է, այդ դէպքում պարզ է, որ չարիքը վեր չի ունենալ...

—

ԳԱՆՁԱՍԱՐԻՑ.—Սակ նորընտիր կաթողիկոսն անծանօթ անձնաւորութիւն չէ դանձակեցոց համար։ Ս. Էջմիածնի վերջին կաթողիկոսական ընտրութեան ժամանակ սրբազան Խապայեանը, որ ներկայ էր այդ ընտրութեանն իբրև պատգամաւոր, այցելեց Դանձակ և մի քանի խօսեց Ս. Յովհաննէս ակեղեցում։ Նրանք, որոնք բաղդ են ունեցել լսելու սրբազանի քարոզը, մինչև օրս էլ գովաստանքով են յիշում։ Նոյեմբերի 25-ին յիսուն հոգու ստորագրութեամբ շնորհաւորական հեռագիր ուղարկուեց Երուսաղէմ նորընտիր կաթողիկոսին։

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ.— Թէ քաղաքում և թէ գիւղերում խիստ տարածուած է երեխաների մէջ «Ջուխէչ» և «Պալմբուկ» հիւանդութիւնները։ Մեռնողների թիւը մեծ է։

—Դաւառիս կաթոլիկ քահանաները պատրաստւում են խնդրամատոյց լինելու ուր հարկն է, որպէս զի տիրացուների քահանայ ձեռնադրուելը արգելուի։ Քահանայ դառնան միմեան կրթուած անձինք։

Լիայոյս ենք որ նրանք պիտի կարողանան իրենց մտադրութիւնը առաջ տանել, քանի որ նրանց մէջ կայ համերաշխութիւն և գործելու ցանկութիւն։

—

ԾԱԼԿԱՑԻՑ. (Ախալքալաքի գաւառ) Տարագիր գիւղում այս մօտ օրերիս մինը խելագարւում է, ազգականները դիմում են Հիմնեա գիւղի Տէր Կարապետ քահանային, որը թէ Ծալկայի և թէ Ախալքալաքի գիւղացիներին յայտնի է իւր քրիստոնեութեամբ։ Ի հարկէ Տէր հայրը չի մերժում խելագարի ազգականներին, և կարմիր ոսկիների չնորհիւ ուղևորւում է Տարագիր։ Տեղ հասնելով՝ Տէր հայրը ուզում է դիմել իրան «ի վերուստ» չնորհուած գաղտնիքներին, խելագարը խնդրում է նըրան, որ նա մինչ գործը սկսելը, իրան հետ պնայ գոմ. «Նրան խոստովանանք ունի ասելու»՝ եւ երբ նրանք երկուսով առանձնանում են գոմի՝ մէջ անկիւնը, խելագարը բռնելով տէր հօր օձիքից, սկսում է, նախօրօք ձեռում պահած քարով, հարուածներ հասցնել տէր հօր գլխին՝ ասելով. «Դու պիտի ինձի լուացնես, հերիք չէ ինչքան որ ասոր անոր խափչով պղտոցեցիր» ու այնքան է տալիս, մինչև որ խեղճ տէր Կարապետը արիւնաշաղաղ ուշագնաց գլորւում է գետին։ Տէր հօր դրութիւնը անյուսալի է։

—

ԲԱՆԱՆՑԻՑ (Գանձակի գաւառ).—Մի քանի հովիւներ, հայ և թուրք, Նոր-Բայազիտից ոչխար բերելու ժամանակ Բանանց գիւղից ոչ այնքան հեռու յարձակման են ենթարկւում երեք թուրք աւազակների կողմից. նրանցից խլում տանում են երեք ոչխար և թուրք հովիւներից մէկին էլ ծանրապէս վիրաւորում են հրացանի գնդակով։

ՄԵՐ ԹԵՄԱԿԱՆ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐԱՆՈՑՆԵՐԻ ԵԿԱՄՏԻ ՑԱՅՑՕՐ ԱՆՏԵՍ ԱՌՆՈՒԱԾ ԱՂԲԻՒՐՆԵՐԸ

(Նամակ խմբագրութեան)

—

(Վերջ*)

Ուսումնասիրելով հայոց թեմական հոգևոր դպրանոցների կանոնագրութեան վերաբերեալ հարցը՝ ես միշտ ուղեցոյց ունէի՝ ի մի խմբել և, ըստ կարեացս, որոշականացնել դոյն դպրանոցների նորմալ (որոշ) կանոնագրութեան հիմունքները։ Այդ նոյն ուղղութեան հետեւել եմ հայոց թեմական հոգևոր դպրանոցների եկամտի աղբիւրների որոշականացման հարցում ևս։

Ըստ իս՝ անվիճելի է, որ այսօր, երբ մեր թեմական հոգևոր դպրանոցները կարծես, անյոյս խարխափում են այնքան սթափեցուցիչ-վհատիչ տագնապի մէջ,—անվիճելի է, որ մենք նոյն իսկ օրը ցերեկով պիտ. զինուենք ճրագով՝ որոնելու նրանց դրամական ապահովութեան վերաբերեալ պաշտօնական և բարոյական փաստերը։

Համաձայն այդ իսկ ուղղութեան՝ հայոց թեմական հոգևոր դպրանոցների եկամտի աղբիւրների նուաստոտ կազմած ցանկում չհշտուած են՝ իբրև նոյն դպրանոցներին հասանելիք գումարներ՝ «վանքերի եկամտի տասանորդը» (կէտ՝ «Գ») և ծխականների «երկու-երկու կոպէկ»-ը (կէտ՝ «զ»)։

Եւ այդ աղբիւրները չհշտուած կան

*) Տես «Նոր-Դար» № 175.

Ուսումնասիրելով հայոց թեմական հոգևոր դպրանոցների կանոնագրութեան վերաբերեալ պաշտօնական այդ փաստն ամենայն դիւրութեամբ կարելի է վերակենդանացնել այսօր ևս։

Ազգիս Վեհափառ Հայրապետը, իրեն, ի միջի այլոց, «ուղեցոյց առնելով Հայ-Լուսաւորչական եկեղեցու հնուց գոյութիւն ունեցող որոշումները» (յօդ. 1132) և յենուելով իւր՝ երբ Հայաստանեայց եկեղեցու (որի այսպէս ասած, մի մասն են կազմում մեր թեմական հոգևոր դպրանոցները—յօդ. 1209) լիազօր հոգևոր պետի (յօդ. 1117) իրաւունքի վրայ՝ կարող է այսօր ևս պարտաւորեցուցիչ հրատարակել 1865 թուի 31-ն յունուարի «վչտալի» Մաստիթէոս կաթողիկոսից հաստատուած պաշտօնական թելադրութիւնները, նամանաւանդ որ, որքան ինձ յայտնի է, այդ թելադրութիւնները պաշտօնապէս վերացուած էլ չեն եղել երբէք։

Մենք արդէն գիտենք, որ այդ իր գործադրութիւններում ամենայն հայոց Վեհափառ Կաթողիկոսին թէ և թիկունք է հանդիսանում ինքը պետ. օրէնքն իւր՝ Հայ-լուսաւորչական գաւանութեան վերաբերեալ մի շարք յօդուածների համագումար, ներքին իմաստով ևս։ Վերջապէս, չէ որ միմիայն պետ. օրէնքի որոշ յօդուածների համագումար, ներքին իմաստով վերացած են հիմնւում մեր թեմական հոգևոր դպրանոցների եկամտի աղբիւրների վերև չհշտուած այսօր պաշտօնապէս գոյութիւն ունեցող զուտ հոգևոր իշխանութեան թելադրութիւնները (կէտեր՝ «ա, բ, է—ժ»)։

Ապա՝ եթէ նոյն իսկ ընդունելու լինենք, որ վանքերի եկամտի «տասանորդ»-ին և ծխականների 2-ական կոպէկի տուրքին վերաբերեալ անիրագործելի է՝ իբր պետ. օրէնքում բառացի չչհշտուած նորմա, — նոյ նոյն իսկ այդ դէպքում գործի դրութիւնը չի փոխուում։ Ցիրաւի. նախ ըստ պաշտօնական «Ցուցակագրի»՝ ամբողջ Ռուսիայում կան ընդամենը 79 վանք, որոնցից միայն 18 վանք ունեն եկա-

*) Տես «1837—1888 յիսնամեակ հայոց հոգևոր թեմական դպրանոցին Երևանայ» Թիֆլիս, 1888 թ., էջ 309)։

ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՅՑ ՀԱՐՑԵՐ

ՖԻԼՈՆ Շահ-Նազարեան

Ա) Յիշատակ ս. ա. «Աստուա»-ի հիմնադրութեան։

Ասիոյ մէջ տարածուած հայ գաղութներուն մէջ ամէն տարի մեծ տօնախմբութեամբ կը նշուի «Աստուա»-ի հիմնադրութեան տարեդարձը։ Ասոր պատճառը այն է, որ «Աստուա»-ի հիմնադրութիւնը ամենէն կարեւոր դէպքն է եղած հայ ազգային կեանքին մէջ։ Ան ամենէն ուժեղ միութիւնն է եղած մեր ազգ

ԱՐՁԱԿ ՀԱՐՑԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆ

Ընթերցող

ՄՈՍԿՈՎ, 8 նոյեմբերի.—Մեզմէ քա-
ոսի օրեր ետք, սաստիկ չէ ծգձ-
փուած:

Ոմանք կը հարցնեն ինծի, թէ ինչո՞ւ
«Ծաղիկ»-ը այդ չէ, ինչ որ
ժամուն «Ծաղիկ»-ը կոչուեցաւ
Ֆելիքն է պատ: Պատճառը հետե-
ւեալն է. մեր ընթերցողներէն շատ
մը կը գրեն մեզի, թէ ինչո՞ւ մենք
մեր հարցերուն պատասխանները
կը տպենք ոչ թէ անմիջապէս, այլ
ամսուան վերջը, երբ հարցերը
մոռցուած են արդէն: Ուրիշներ
կը գրեն, թէ ինչո՞ւ մենք մեր
հարցերուն պատասխանները չենք
տպեր ամսուան վերջը, երբ հար-
ցերը մոռցուած են արդէն: Ուրիշ-
ներ

բուսած է. սակայն, այդ բանը չի խանգարում նրան ամեն անգամ սուլթանի մօտ եղած միջոցին գանգատուելու իւր չբաւարարութեան վրայ. այն օրից, որ նա ստանձնել է մեծ վեզիրի պաշտօնը, սուլթանից երեք անգամ իբրև պարգև ստացել է 6000-ական թրքական լիրա: Ինքն Ընդուլ-Համիդը զարմանում է իւր վեզիրի մշտական մուրացկանութեան վրայ և նրան անուանում է «զոհյա ատնող ապրատ»: Իսկ մանր պաշտօնեաներն ութ ամիս չարունակ ոչ մի գրոշ չեն ստացել իրենց ռոճկից, և այս բանը կատարւում է Սայիդ-փաշայի օրով, որին իւր գործունէութեան սկզբում առաջադիմական էին համարում:

—

ՄԱԿԵԴՈՆԻԱ.— Իւր հաղորդած տեղեկութիւնները փաստերով հաստատելու համար «Mouvement Macédonien»-ը, «Գետ. Վեդ.»-ի ասելով, սկսել է տպագրել թուրքերի կողոպտած և այրած բուլղարական գիւղերի ցուցակը, տանջանքներից մեռած ապամարդկանց, բռնաբարուած և ապա սպանուած կանանց և աղջիկների, նմանապէս և բանտարկուած քահանաների, ուսուցիչների և գիւղացիների ազգանունները: Այդ ցուցակից երեւում է, որ մի քանի գիւղերում, կողոպուտից յետոյ, բանտն էին ձգւում 100 և 150 հոգի, այսինքն կեսն մնացած բոլոր գիւղացիներին, ուսուցիչներին և քահանաներին: Թրքական բանտերում արուող տանջանքները խիստ բազմազան են և նկարագրել անկարելի է: Սովորաբար տանջանքներից առաջ բանտարկեալներն ենթարկւում են խիստ ցնիկական ծաղրի և կրօնի հայհոյման, ինչպէս այդ անում էին թուրքերը յոյների ապստամբութեան ժամանակ, XVIII դարի սկզբում, Սիրիայի քրիստոնեաների կոտորածի ժամանակ 1863 թուին, բուլղարների կոտորածի ժամանակ վերջին ռուս-թրքական պատերազմից առաջ և հայոց կոտորածների ժամանակ 1894—1896 թուականներին: Հայոց կոտորածների ականատեսների ֆրանսերէն և անգլիերէն լեզուններով հրատարակուած նկարագրութիւնների մէջ առաջ են բերւում անգթութիւնների և տանջանքի բռնութեան ձևերի այնպիսի դէպքեր, որոնց իսկական նկարագրութիւնն անկարելի է:

—

ԱՆԳԼԻԱ.— «Manchester Guardian»-ը լուր է հաղորդում Ֆրանսիայի և Անգլիայի մերձեցման մասին: Ցիշեալ լրագրի ասելով, Մարոկկոյի վերաբերմամբ այդ երկու պետութիւնների միջև կնքուած համաձայնութիւնն արդէն կատարուած իրողութիւն է: Լրագիրը պնդում է, որ այդ համաձայնութեան զօրութեամբ, Ֆրանսիան carte blanche է ստանում Մարոկկոյում, որի փոխարէն հրաժարւում է նոր երկրի և նոր Հեբրիդայի վերաբերմամբ իւր պահանջած իրաւունքներից, նմանապէս և ճանաչում է statu guo-ն Եգիպտոսում: Անգլիայի և Ֆրանսիայի մերձեցման վերաբերմամբ «Daily Tel.»-ը նկատում է. «Ֆրանսիայի և Անգլիայի յարաբերութիւնները այժմ այնքան սրտագին և բարեկամական են, որքան դեռ ևս չեն եղել երբէք վերջին երեսուն տարուայ ընթացքում»:

—Դուբլինից հաղորդում են «Patrie»-ին, որ անգլիական կառավարութիւնն այժմ ամեն ջանք գործ է դնում իմանալու համար, թէ ինչպէս կը վերաբերուի հասարակութիւնը թագաւոր Էդուարդ VII-ին, եթէ վերջինս վճռի այցելել Իռլանդիա: Քիլֆասում տեղի ունեցած բանկետում փոխարքայ լորդ Դուդլէյ այդ առթիւ մի ճառ արտասանեց, որի մէջ յայտարարեց, որ, «եթէ հանգամանքները ներեն, թագաւորը չուտով կ'իրագործէ մի քանի ամսում յետաձգած իւր ծրագիրը և կ'այցելէ Կանաչ կղզին, որն ամենափայլուն չոզակներից մէկն է հանդիսանում անգլիական արքայական թագի վրայ»: Այս յաւատեսական ճառը քրիստոնեութեան է ենթարկւում իռլանդական անկախ մամուլի մէջ: Անկախ օրգանները միաձայն խորհուրդ են տալիս թագաւորին, որ նա չայցելէ Իռլանդիա, որովհետև նրան սպասում է այնտեղ այնպիսի մի ընդունելութիւն, որ հազիւ թէ հաճելի լինի նրան:

„ՆՈՐ-ԴԱՐ“-Ի ՀԵՌԱԳՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ՀԵՌԱԴ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

Նոյեմբերի 26-ից

ԼՈՆԴՈՆ.— Պալատը հաւանութիւն տուեց Բալֆուրի հաղորդածին, որ վերաբերում է Գերմանիայի ընկերակցութեամբ Վենեցուէլի դէմ գործ դնուելիք միջոցներին: Կրնորորը յայտարարեց, որ Անգլիայի վրայ ոչ մի պարտք չէ դրած իւր գաղութների չաքարի վրայ հաւասարեցնող մաքս դնելու մասին:

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՎՍԿ.— Եղանակը մեղմացաւ. Լապլանդիայի և Մարմանի հետ պոռտի հաղորդակցութիւնը ընդհատուած է:

ԲԵՐԼԻՆ.—Այսօր կայսրը ընդունեց ռուսաց ծովային զօրքի իշխան Դոլգորուկովին:

ԿԱՆՏԱՑԱՐԷՕ.—Առաւօտը երկու անգամ ստորերկրեայ ցնցումներ տեղի ունեցան, ոչ մի վնաս չպատճառելով:

ԿԻԵՎ.—Մեծ Իշխան Կոնստանտին Կոնստանտինովիչը անցաւ այստեղով Վորոնեժ:

ՄԱԴՐԻԴ.— Մարոկոյի գահաժառնդիրը գանւում է Տացղէում, որտեղ տիրացել է գահձարանին, թնդանօթների և չէնքերի պահեստին և հարկ է հանումնա մտադիր է յարձակուելու Սուլթանի (Մարոկոյի) զօրքի վրայ:

ՆԱՊՈՒ.—Թագաւոր Կայսրը և թագաւոր Կայսրուհին այցելեցին ֆրանսիական «Ստուր» նաւը. Նաւի վրայ 15 րոպէ մնալով նոցին Մեծութիւնները նաւասաններն ողևորուած ուռանկերով մեկնեցին «Ջանդարմ» գրօսանաւը և վերադարձան Լիւտդիա:

Խմբագիր հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՐԿԱՒՈՐ Է
ՄԻ ՀԱՑ ԱՂԱԽԻՆ
Բալեաթինսկայա փողոց № 8 բնակարան, իշխ. Մ. Թումանեանց
]1106] 2—1

ԹԻՓԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Շաբաթ, 30-ին նոյեմբերի, 1902 թուականին, նշանակուած է
ԳԻՄԱԿԱՀԱՆԴԷՍ
ընդունած պայմաններով:
(1103) 3—2

ԹԻՓԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԸ
յայտարարում է իրաւութիւն պ. պ. անդամների և կանդիտատների, որ մինչև առաջիկայ դեկտեմբերի 15-ը իրենց մուտքի տոմսակները 1903 թուի համար ընդունողները կը համարուին իրրև կամովին ժողովարանիս հետացած:
(1098) 3—3

ԼՈՒՍՏՍԻՐ
„ՎԱԶԻ ՄՅԱԿՈՅՆԸ“
Կ. Կ. ՄԵԼԻՔ ՉԱՀՆԱԶԱՐԵԱՆՑԻ
206 երես 95 պատկերներով
Գինն է 1 րուբ.
Վաճառւում է Թիֆլիսում «Գուտտենբերգ» և «Կեդրոնական» գրավաճառանոցներում, Բագու՝ Ս. Յարութիւնեանցի և Թադէոսեանցի գրախանութներում, Դերբէնդ՝ Կ. Զահիջանեանցի անձամբ Յ. Մալեանցի և Ապտեանց և մօտ:

Բարձրդասակարգի կանայք ինչպէս և դեղեցկութեամբ ամենանշանաւոր դերասանուհիները հրաժարուելու են գործածել ԿՈՒԼԴ ԿՐԵՄ (Gold Creme), որ դառնահամ է և իւղալի տեսք է տալիս դէմքին: Դրա տեղ նրանք գործ են ածում
CREME SIMON
(Կրեմ-Սիմօն) դեղեցիկ հոտ ունեցող արտադրութիւնը, որ երբէք չի փչանում և պնդացնող ու փափկացնող յատկութիւնների հետ միասին առաւելութիւն ունի պահպանելու դէմքի գոյնի շնորհալիութիւնն ու երիտասարդական թարմութիւնը:
LA POUDRE SIMON
(Պուդր Սիմօն) La savon á la Creme Simon (Օճառ Սիմօնի) ունին նոյն հոտը և լրացնում են նրա գրմանալի յատկութիւնները J SIMON 59 Faubourg St. Martin Paris.
Մաս-մաս վաճառւում է վարսավէրների, պարֆիւմերների և դեղագործների մօտ:
(M. 189,290) 24—4

Открыта подписка на 1903 годъ НА ДВА изданія:
I.
ЕЖЕДНЕВНАЯ ГАЗЕТА
XXI-й годъ НОВОСТИ ДНЯ XXI-й годъ.
съ портретами государственныхъ и общественныхъ дѣятелей.
Вступая въ двадцать первый годъ изданія, газета наша не нуждается въ какой-либо рекомендаціи ея характера и содержанія.
Подписная цѣна: на годъ 8 р., 6 мѣсяцевъ—5 р., три мѣсяца—3 р., одинъ мѣсяцъ—1 р.
II
ЕЖЕНЕДѢЛЬНЫЙ ИЛЛЮСТРИРОВАННЫЙ ЖУРНАЛЪ
СЕМЬЯ.
Одиннадцатый годъ изданія.
Несмотря на свою дешевизну, журналъ «СЕМЬЯ» представляетъ собою вполнѣ изящное изданіе, въ которомъ помѣщается разнообразный интереснюй текстъ, масса портретовъ іерарховъ православной церкви, государственныхъ-общественныхъ дѣятелей, представителей науки и искусствъ и т. п. и рисунковъ, относящихся къ злобѣ дня.
Подписная цѣна: на годъ съ доставкою—3 р.
Адресъ: Москва, Красныя ворота, с. д.

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԱՆ ՄԵԾ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ×××××
×××××× ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ
Կեանքի ապահովագրութեան գործը տարէցտարի աւելի ու աւելի հսկայական ծաւալ է ստանում: Վիճակագրութիւնը ցոյց է տալիս, որ ներկայումս ամբողջ աշխարհում ապահովագրուած է 20.000,000,000 րուբլու, և ամեն տարի ապահովագրւում է կէս միլիոն րուբլու:
Ապահովագրութեան գործի այսպիսի տարածումն անհրաժեշտ է կացուցանում ապահովագրուողներին տալու ամեն տեսակ արտօնութիւններ և յարմարութիւններ, ինչ որ առել է այժմ կեանքի և ցմահ կոմուտանների ապահովագրութեան ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ, որի կանոնադրութիւնն իւր մէջ պարունակում է ուրիշ ապահովագրական ընկերութեանց բոլոր լաւ կողմերը և ապատ է նրանց բոլոր թերութիւններից:
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ապահովագրութեան հիմքը կազմում են՝ պրեմիաների էժանութիւնը, պոլիսների անվիճելի լինելը, պրեմիաների մաս-մաս վճարումը, պոլիսների խանգարելի չլինելը. ձրի պոլիս, պոլսի զօրութեան վերակազգնումն, օգուտներին մասնակցելը եւ այլն:
Այս բոլորի շնորհիւ կեանքի ապահովագրութեան ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ գործում է մրցութիւնից դուրս և ամենքին հնարաւորութիւն է տալիս աննկատելի կերպով խնայողութիւններ անելու և ապահովելու իրեն ու իւր ընտանիքը:
Ռոստովի (Դոնի վրայ) ՏՐՋԱՆԻ վարչութեան գրասենեակը
Դոնի, Կուբանի և Թերեքի շրջանների ևՍտաւրապոլի ու Սև ծովի նահանգների համար գտնւում է
Ռոստովում-Դոնի վրայ, ՉԱԽԷՐԵԱՆԻ եւ ԸՆԿ. բանկային տան մէջ
Տարբեր տեղերում են ներկայացուցիչներ Վլադիկաւկազում, Ղզլարում, Մոզդոկում, Աբմաւիրում, Եկատերինոդարում, Անապայում, Սոչիում և այլ հայաբնակ քաղաքներում Հիւսիսային Կովկասում:
(1071) 20—10

1865 թ. Մոսկուա 1882 թ. Մոսկուա
1870 թ. Ս.-Պետերբուրգ ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐԻ 1896 թ. Նիժնի-Նովգորոդ
ԵՒ ՌԵՏԻՆԻ ՈՒՐԻՉ ԻՐԵՂԷՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՊԱՐԳԵՒԸ (GRAND-PRIX)
Պարիզի ցուցահանդէսում արուած է Ռուսիայում ՄԻԱՅ
ՌՈՒՍ-ԱՄԵՐԻԿԵԱՆ ՌԵՏԻՆԻ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆԸ
ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ,
որը հիմնուած է 1860 թուականին:
Խնդրում են ՌԵՏԻՆԻ ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ պնդիս ուշադրութիւն դարձնէք տակերի վրայ եղած դրոշմներին



մանաւանդ Ընկերութեան հիմնադրութեան „1860“ թուականի և „С.-Петербургъ“ բառի վրայ, որոնք գտնուած են եռանկեան մէջ (գործարանի դրօշմը):
մեծ բաճախութեամբ վաճառւում է
„ԼԻՕՊԱԼԴ ՆԷՅԶԵԼԵՐ“ ԱՒԵՏՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ
Ս.-Պետերբուրգում, Մոսկուայում, Ռիգայում, Ռոստովում-Դոնի վրայ, Եկատերինոդարում, Իրկուտսկում եւ Խարկովում
(1057) 35—21



ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆ
ԳՐԱՄՖՈՆ
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Թիֆլիսի Գոլովինսկի պրոսպեկտ, տունը Բլինեանցի. № 7 Շատ պատիւ ունիմ է գիտութիւն յարգելի գնողների հաղորդելու, որ հրապարակի վրայ յայտնուել են մեր գրամաֆոնների և պլաստինների և գործիների նման շինուածքներ և, որ ցաւալի է հասարակութիւնը մոլորեցնելու դիտաւորութեամբ, ծախւում են պակասեցրած գնորով և բազմատեսակ խոստումներով, որոնց վախճանն այն է լինում, որ գնողները իրենց տուած տպրանքի և պլաստինի վերարերութեամբ հիասթափւում են:
Գրամաֆոններ և նրանց համար պլաստիններ տանել ցանկացողներին խորհուրդ ենք տալիս գնել մեր խանութում, ուր կարէլի է անձամբ համոզուել, թէ որքան տարբերութիւն կայ մեր և ուրիշների կողմից առաջարկածների մէջ և որ դլխաւորն է, առնողը միշտ գոհ կը մնայ
(1091) Ըստ պահանջման ԿԱՏԱԼՕԳՆԵՐ անվճարապէս կուղարկուեն ձրիապէս 25—7

Доз ценз. Тифлисъ, 26-го ноября 1902 г. Տպարան ընկ. «Վերեիչն և Կամենմախեր» Типографія Т-ва „Вереичевъ и Каменмахеръ“, Михайловск. пр., № 18 Телеф. № 852